

**40 օրական փոքրիկը ջրհեղեղից փրկվել ու
արդեն Քարկոփ է վերադարձել. գյուղում
աղետի 1 ամիսն են ամփոփում**

~

***40-Day-Old Infant Rescued from Flood Returns
to Karkop as Village Marks One Month Since
the Disaster***

***40denní dítě zachráněné před povodní se vrací
do Karkopu, vesnice si připomíná měsíc od
katastrofy***

by

Anna Harutyunyan

Public Radio of Armenia / Public Radio of Armenia

SYNOPSIS

40 օրական փոքրիկը ջրհեղեղից փրկվել ու արդեն Քարկոփ է վերադարձել. գյուղում աղետի 1 ամիսն են ամփոփում

Սա դրամատիկ համամարդկային պատմություն է, որում կա դրամատիկ, գրեթե ողբերգական շրջադարձ և փոքրիկ հրաշք:

Փոքրիկ Յանան հիմա արդեն տատիկի ապահով գրկում է. երբ մեծանա՝ կպատմեն, թե ինչպես է փրկվել ջրհեղեղից, երբ ընդամենը մի քանի օրական էր: Փոքրիկն իր 2 քույրերի հետ Քարկոփ գյուղում է ապրում, հենց այն գյուղում, որը մայիսի 26-ին ամբողջովին կորցրել էր կապն արտաքին աշխարհի հետ: Գյուղի բնակիչներն աղետից հետո կամաց–կամաց իրենց տներն են վերադառնում: Ջրհեղեղից հետո հիմա էլ ոռոգման ջրի են սպասում, ասում են՝ այգիների կեսը ջուրը տարավ, մյուս կեսը՝ առանց ջրի, չորանում է:

40-Day-Old Infant Rescued from Flood Returns to Karkop as Village Marks One Month Since the Disaster

A Dramatic Story of Survival and a Small Miracle: 40-Day-Old Baby Rescued from Flood Returns to Karkop. Forty-day-old baby Yana, who was rescued from the devastating flood, is now safely back in Karkop, resting in her grandmother's protective arms. When she grows up, her family will tell her the incredible story of how she survived the flood just days after being born. Yana now lives in Karkop with her two sisters — the same village that, on May 26, was completely cut off from the outside world due to the disaster. Slowly, the residents are returning to their homes, trying to rebuild what was lost. But challenges remain. After the floodwaters receded, a new hardship emerged: the lack of irrigation water. Villagers say half of their orchards were washed away, and the rest are withering without water. Karkop is still healing — but the return of baby Yana is a symbol of hope amid the devastation.

40denní dítě zachráněné před povodní se vrací do Karkopu, vesnice si připomíná měsíc od katastrofy

Dramatický příběh o přežití a malý zázrak: 40denní dítě zachráněné před povodní se vrací do Karkopu. Čtyřicetidenní miminko Yana, které bylo zachráněno před ničivou povodní, je nyní v bezpečí v Karkopu a odpočívá v ochranné náruči své babičky. Až vyroste, bude jí rodina vyprávět neuvěřitelný příběh o tom, jak přežila povodeň jen několik dní po narození. Yana nyní žije v Karkopu se svými dvěma sestrami – ve stejné vesnici, která byla 26. května zcela odříznuta od okolního světa kvůli katastrofě. Obyvatelé se pomalu vrací do svých domovů a snaží se obnovit to, co bylo ztraceno. Problémy však přetrvávají. Jak povodně odpadly, tak se objevila nová potíž: nedostatek vody na zavlažování. Podle vesničanů byla polovina jejich sadů odplavena a zbytek bez vody chřadne. Karkop se stále hojí – ale návrat malé Yany je symbolem naděje uprostřed zkázy.

Original script

(0:02 – 0:18)

Փոքրիկ Յանան հիմա արդեն տատիկի ապահով գրկում է. երբ մեծանա՝ կպատմեն, թե ինչպես է փրկվել ջրհեղեղից, երբ ընդամենը մի քանի օրական էր: Փոքրիկն իր 2 քույրերի հետ Քարկոփ գյուղում է ապրում, հենց այն գյուղում, որը մայիսի 26-ին ամբողջովին կորցրել էր կապն արտաքին աշխարհի հետ.

(0:20 – 0:59)

«Մեր թոռնիկը, կարելի է ասել, հրաշքով է փրկվել ջրհեղեղից, մենք չմտածեցինք, որ գետը միանգամից տենց կվարարի, համենայն դեպս վախեցանք ամեն ինչից: Հետո դե մեր կամուրջը փլվել էր, հետո նոր ժամանակավոր կամուրջ կառուցեցին, ու մենք մեր փոքրիկին մի ուրիշ գյուղ տեղափոխեցինք... դրանից հետո մի շաբաթ մեկի տանը մնաց, մի շաբաթ մյուսի, հետո նորից նոր կամուրջով տուն բերեցինք, հիմա արդեն 2 ամսական է».

(0:59 – 1:13)

Իսկ տան մեծերն այս ամբողջ ընթացքում գյուղում են մնացել, 30 օր կռիվ են տվել խոնավության, տիղմի ու ցեխի հետ: Քարկոփի բնակչուհի Անահիտ Ռևազյանը պատմում է՝ ջրի մեջ հայտնված գյուղում սնունդը խնայողաբար են օգտագործել, չնայած հարևան Շնող գյուղում հաց էին թխում ու անտառի ճանապարհներով հասցնում Քարկոփ.

(1:14 – 1:18)

«Էտ արհավիրքը, կարելի է ասել, երկրաշարժից էլ ահավոր էր.»

(1:18 – 1:39)

Շուրջ 300 բնակիչ ունեցող Քարկոփն աղետից ամենաշատը տուժած բնակավայրերից է: Գյուղը հիմնական մայրուղուն կապող կամուրջը փլվել է, ժամանակավոր հետիոտնային կամուրջն էլ արդեն 2-րդն է. նախորդը չէր դիմացել դեռ չհանդարտված Դեբեդի ալիքներին: Գյուղում ջրհեղեղից շուրջ 1 ամիս անց արդեն քիչ թե շատ աշխուժություն կա: Ամենակարևորը երեխաներն են վերադարձել՝ ասում է Քարկոփի վարչական ղեկավար Հերմինե Պետրոսյանը.

(1:40 – 2:10)

«Բավականին աշխատանք ենք իրականացրել 1 ամսվա ընթացքում, գյուղն ամբողջովին մաքրել ենք տիղմից, բնակարանները, այգիները, փողոցները՝ ամբողջը մաքրել ենք: Վերականգնվել է էլեկտրաէներգիան, գազամատակարարումը, խմելու ջուրը, հին կոյուղին, չնայած նախատեսվում է նորը կառուցել: Փողոցն է խճապատվել, հետո նաև կասֆալտապատենք.»

(2:10 – 2:24)

Չնայած դրան՝ առայժմ միայն շենքերի վերին հարկերի բնակիչներն են գյուղ վերադարձել, առաջին հարկերում ապրելն առայժմ անհնար է: Քարկոփցի Ռուզաննա Մաշինյանն արդեն 32 օր գյուղ է գալիս միայն տունը օդափոխելու, լվացքը հավաքելու համար:

English script

(0:02 – 0:18)

Little Yana is now safe in her grandmother's arms. When she grows up, they'll tell her how she survived the flood when she was just a few days old. The little one lives with her two sisters in the village of Qarkop, the very village that on May 26 completely lost connection with the outside world.

(0:20 – 0:59)

"Our granddaughter, I could say, survived the flood by a miracle. We didn't think the river would swell up like that so suddenly. Anyway, we were scared of everything. Then, well, our bridge had collapsed, and then they built a new temporary bridge, and we moved our little one to another village... After that, she stayed at one person's house for a week, then another's for a week, and then we brought her home again across the new bridge. She's two months old now."

(0:59 – 1:13)

Meanwhile, the adults of the house stayed in the village throughout this entire period, battling humidity, silt, and mud for 30 days. Anahit Revazyan, a resident of Qarkop, recounts that in the submerged village, food was used sparingly, although bread was baked in the neighboring village of Shnogh and delivered to Qarkop via forest roads.

(1:14 – 1:18)

"That calamity, you could say, was even more terrible than an earthquake."

(1:18 – 1:39)

Qarkop, with about 300 residents, is one of the settlements most affected by the disaster. The bridge connecting the village to the main highway collapsed, and the temporary pedestrian bridge is the second one; the previous one couldn't withstand the still-unsettled waves of the Debed River. About a month after the flood, there's already a good deal of activity in the village. The most important thing is that the children have returned, says Hermine Petrosyan, the administrative head of Qarkop.

(1:40 – 2:10)

"We've done quite a lot of work in a month. We've completely cleaned the village of silt – the homes, gardens, streets, everything. Electricity, gas supply, drinking water, and the old sewage system have been restored, although a new one is planned. The street has been graveled, and we'll asphalt it later."

(2:10 – 2:24)

Despite this, for now, only residents of the upper floors of buildings have returned to the village; living on the first floors is currently impossible. Ruzanna Mashinyan, from Qarkop, has been coming to the village for 32 days just to air out her house and collect laundry.

(2:24 – 2:49)

«Այնքան ջուր էր լցվել տունը, որ այս պատն էլ փլվել է. նայեք, պատի վրա երևում է ջրի հետքը: Գույք, ինչ ունեինք—չունեինք լրիվ թափեցինք, լրիվ ջրի մեջ կորած էր: Ահագին սխտոր բան ունեի, որ հետս տանելու էի շուկա ամբողջը ջուրը քշեց տարավ.»

(2:49 – 2:59)

Գյուղում նման աղետ չեն հիշում, միայն մեծերից են լսել, որ 50-ականներին է Դեբեդը այսպես ավերից դուրս եկել: «Ասում են՝ նորմալ է, ջրի տարածը կվերադարձնենք.»

(2:59 – 3:08)

«Վայ, էտ ինչ ջուր էր, էտ ինչ ջրհեղեղ էր, ջուր էր մեքենաները մեջը, համ էլ՝ անձրևը էտ ոնց էր գալիս.»

(3:08 – 3:33)

Գյուղում շատերը նաև այգիներ, պտղատու ծառեր են կորցրել. դեռ կրած վնասն ամբողջությամբ չհաշված՝ ահագանգում են՝ հիմա էլ երաշտի վտանգի առաջ են: Ասում են՝ այգիների կեսը ջուրը տարավ, մյուս կեսն առանց ջրի չորանում է: Ռոռզման ջուրը հեղեղի ժամանակ փլուզված կամրջով էր գյուղ հասնում, հիմա ռոռզման միակ հույսը անձրևն է, թե չէ կահույքի, գույքի ու թաց պատերի հետ նաև չհասած կիվին ու ծառերի վրա մնացած թուզն է չորանում.

(3:34 – 3:38)

«Թուզը արդեն հասնում է, մի անգամ էլ անպայման աշնանը կգաք, որ հյուրասիրենք....»

(2:24 – 2:49)

"So much water poured into the house that this wall also collapsed. Look, you can see the water mark on the wall. All our belongings, everything we had, we threw away completely; it was all lost in the water. I had a lot of garlic that I was going to take to the market, and all of it was swept away by the water."

(2:49 – 2:59)

Residents don't recall such a disaster in the village; they've only heard from elders that the Debed overflowed its banks like this in the 1950s. They say, "It's normal, we'll get back what the water took."

(2:59 – 3:08)

"Oh, what water it was, what a flood it was! The cars were in the water, and how that rain was falling!"

(3:08 – 3:33)

Many in the village also lost gardens and fruit trees. Without having fully calculated the damage suffered yet, they're raising the alarm that they're now facing the danger of drought. They say half the gardens were swept away by the water, and the other half is drying up without water. The irrigation water used to reach the village via the bridge that collapsed during the flood. Now, the only hope for irrigation is rain; otherwise, along with the furniture, belongings, and wet walls, the unripe kiwis and figs left on the trees are also drying up.

(3:34 – 3:38)

"The figs are ripening already. You absolutely must come again in the autumn so we can treat you..."